

են Հայոց Մատ. Պատմութեան մէջ Բարդուէնի, Խորհրդուտի, Ափրիկանոսի (74), Պրոքսինի (81—2) եւ յիշատակութիւնք, քանի որ Հայ գրականութիւնն ոչինչ չաճած է անոնցմէ. հակառակ դէպքին հարկ էր չմոռնալ նաեւ զՏաւրոս, զԱրտեմիդ, զՊրոքսինոս եւն, որոնք այնպէս ցանկալի ներութիւններ աւանդած են Հայոց մասին: Կարեւորութենէ աւելի տեղ շնորհուած է նաեւ Հայաստանի քաղաքական պատմութեան (էջ 150—158 եւն). Մատ. Պատմ. կ'ենթադրէ որդէն քաղաքականին ի յառաջգունէ ժանօթութիւնը:

Երկար չենք ուզեր զբաղել նոյնպէս բովանդակութեամբ, յիշելով հարեւանցի, որ Խորենացին նոյն աւանդական գերթողահայրն է (էջ 123—37, անըմունքի եղաւ մեզ այսչափ ըզգածակ էջեր յատկացուիլ միայն Խորենացւոյ): Գիւտ Կաթողիկոս հեղինակած է նաեւ «Իրանական ճանքը» (էջ 137). Մովսէս Բ. Եղիվարդեցին 551ին Հայոց թուական հաստատած է եւ դրած «Խորատական թղթեր» (!) ու ճանքը (!), էջ 139. Արքայամ Կաթողիկոսի կ'ընծայուին Ներսէս Բ Աշտարակեցւոյ թղթերն եւ Դուռնոյ 555/6 թուականը (էջ 149): — Երկար էջեր գրուած է Անանիա Շիրակացի (էջ 162—71), մինչդեռ աւելի Տյայկապ մասին նագիրք սուղ սողերու մէջ ամփոփուած են. այսպէս Վարդան Պատմիչ (էջ 240) եւն: Հաստարօրինակ թուեցաւ մեզին հարցումս, զոր խօսելով Վարդանայ վրայ կ'ուղղէ. «Արդեօք առականս Վարդան Արգեկցին է թէ մի ուրիշը — դա շատ էլ պարզ չէ: Յամենայն դէպս, սրան եւս վերագրում են Առակագրքի կազմութիւնը», (էջ 240): Եւ Մատի ուսուերէն եւ Հ. Տաշեանի հայերէն ընդարձակ մանրակրկիտ ուսումնասիրութիւններէն յետոյ Առակաց հեղինակի մասին տարակոյն զարմանալի է միայն: Զարմանալի է նաեւ այն, որ անհետաքրքրական կը նկատէ Վարդանայ կարեւոր պատմագրութիւնը, իսկ անոր վերագրուած մեկուողական ախատասիրութիւնք եւ ոչ իսկ յիշատակելու արժանի կ'ընէ: Նման բախտի հանդիպած են նաեւ ԺԳ—ԺԳ դարու երկու նշանաւոր Երզնկացի եւ Սիւնեցի մատենագիրք. հազիւ մանրատու քանի մը խօսք նուիրուած է (էջ 242) ԺԳ դարու Մենկիչ-բանաստեղծ-քերական Յովհ. Երզնկացւոյ եւ պատմագիր Ստեփ. Օրպէեանի. զուարճալի է լինէ Դասարգոցս մէջ վերջնոյս համար թէ «Նոյնպէս սկում» է (Օրպէեանի պատմագրութիւնը) Ագամից (!) եւ Նոյից (!) ու հասնում

մինչեւ Սիւնեաց նախարարութեան վերջնալը, (էջ 242):

Հատ վարկարար չէ վերջապէս «Բանաստեղծութիւնը Հայ գրականութեան մէջ» (էջ 242—254) գլուխը. կարծէր երկարագոյն կանգ առնուլ այս Մատենագրութեան պատմութեան ամենակարեւոր գլխուն քով, եւ փոխանակ մի միայն գուշակի յատկացնելու 250—254 էջերը, պատշաճ խօսք ըսել նաեւ Յովհ. Թուրքումանցւոյ, Գր. Աղթամարցւոյ, Մկրտիչ Նազալի, մանաւանդ Կոստանդին Երզնկացւոյ մասին, որոնք Միջին դարու անուանի տաղասացներու շարքն կը կազմեն:

Ա. մասին վերջը կը նշմարուի Եւսեբիոսի մը, «Նմաններ Հայ բանահիւսութիւնից, քաղած Հայ պատմագիրներից եւ ժողովրդական հուշածոներից» (էջ 265—323), որով կը դիտէ հեղինակն ժանօթացընել ուսանողները նշանաւոր մատենագրաց ոճին եւ ընդունի. հատուածներն լու ընտրուած են ընդհանրապէս:

Ահա փափագանի երկը, զոր ակամայ ստիպուեցանք մեզի ներկայացընել ըլլալու համար անկեղծ եւ «անաչառ», ըստ ինքրանաց հեղինակին (էջ 3), փափաքելով իրեն հետ, որ «հնար լինի ապագայում... աւելի կատարելագործւած լոյս տեսնել»: Կը մաղթենք աւելի յաջողութիւն Բ. մասին, որ ներկայ գրականութեան պատմութիւնը պիտի ընդգրկէ:

Գ. Ն. Ա.



ԱՂԱՆԵՆՑԻ «ԳԻՐԱՆ» ՆՆԵՐԸ

Անխնդ վաստակաւորն Հայոց պատմութեան՝ Գիւտ ԲՏ. Աղանեանց երկար տարիներէ ի վեր (1893էն սկսեալ) առկուն յարատեւութեամբ ձեռնարկած է հրատարակել վերջին դարուց Երմիանի կաթողիկոսաց թղթերը. ցայժմ լոյս ընծայած է մեծագիր՝ քառածալ, ութ պատկառելի հատոր որոնք ընդգրկած են Սիմէոն, Ղուկաս, Դանիէլ եւ Դաւիթ կաթողիկոսաց թղթերն եւ յարակից վաւերագիրներ, անգնահատելի աղբիւրներ՝ վերջին դարուց եկեղեցական եւ քաղաքական պատմութեան համար. յաջորդ հատորով կը խոստանայ յանձնել հրատարակութեան հաւաքածոյ մը՝ «Մանր մատենագիրք ԺԶ—ԺԸ դարուց», որ պիտի ընդհատէ իւր հետաքրքրական բազմատեսակ բովանդակութեամբ կաթողիկոսական վաւերագիրներու — ոչ այնչափ շատերու մատչելի

շարքը: Ըստ գովելի է այս ընտրութիւնը, որ, ինչպէս կը յուսանք, պիտի հետաքրքրէ աւելի ընդարձակ շրջաններ, եւ այսու մի եւ նոյն ժամանակ հայկ-հայթիւական պիտի ըլլայ նպաստ մը — հետագայ պատրաստ հատորներու ծննդեան ալ: Թ. հատորովը կը խոստացուի տալ 26 մանր մատենագիրներու պատմական գրուածներ — մեծաւ մասամբ անտիպ տակաւին, որոնց մէջէն նշանակեց թովմա Մինասեց, Յովհ. Արժիշեցի, Գրիգոր, Բարսեղ վարագեցիներ, Գաւիթ, Վարդան բաղիշեցիներ եւն, պատմիչներ, որոնց գրութիւնք անուամբ միայն ծանօթ են: Այս սիրուն շարքին մէջ կը վայելէր տեսնել նաեւ Գրիգոր Վարդանի ժամանակից կարեւոր Տրիփուլի-նը, որ ցայժմ անտիպ կը գտնուի Ներուսագէմ: Սոյն հատորի բովանդակութեամբ պիտի ըլլայ Ը հատորին վերջը նշանակուած ցանկին համաձայն նաեւ ԺԸ հատորին, «Երաստարարանք ԺԴ—ԺԸ գաւրոց», զոր բաղձալի էր Ժ հատորով հրատարակուած տեսնել, տարուկոյս չկայ որ ասոնց վաճառու արագագոյն պիտի ըլլայ՝ իրենց հետաքրքրական երանգներով, քան կաթողիկոսական միապաղաղ թղթոց: Արախալի է ըսել, որ Արժ. հրատարակիչն արդէն իսկ պատրաստ ունի անտիպ 9 հատոր ալ, որոնք «սպասում են բարերարների նպաստին», Արժ. Աղանեսեցի գովելի ձեռնարկութիւնն արժանի է խրատասանաց եւ ձեռնառութեան մեծանձն Գեկենասի: Կը մաղթեմք կանք նոր Մեկենասներու: Արախալութեամբ դիտեցինք, որ այսպիսի Մեկենասի գեր ստանձնած է «Բագուի Հայոց կուլտուրական Միութեան հրատարակչական մասնաճիւղն», որուն նպաստիւք կը վայելէ լոյս Գիւնի Ը հատորը — Միգու Վարդանի Երաստարարանք Բ — Կը սիրենք յուսալ որ Բագուի Հայոց հրատարակչական Միութիւնն կը ստանձնէ նաեւ Թ եւ ԺԷ հատորներու հրատարակութիւնը:

Հ. Ն. Ս.

Հ. Ս. ԽԱՆՏԵՆ — Նոր դասագիրք թուաբանութեան նախապատրաստական դասընթացք պատկ. հրտ. Նշան-Պապիկեան, Կ. Պոլս 1908. Էջ 85:

Նշան-Պապիկեան գրատունը՝ հայ եւ օտար գրագէտներու արտագրած վէպերուն ձոյն մէկ միեկը կազմելէն զատ այս վերջերս սահմանած է նաեւ իր հրատարակութիւններուն ալ եւ այլ գասագիրքերու նոր շարք մը՝ որոնք օր ըստ օրէ լոյս կը տեսնեն:

Իր վերջին հրատարակութիւններէն է նաեւ Հ. Ս. Խանտենի թուաբանութեան նոր

գասագիրքն՝ որ նախապատրաստական դասընթացքի համար պատրաստուած է: Գիրքն ամբողջութեամբ լաւ եւ ճշակաւոր է ու շատ յարմար՝ փոքրիկները քալ առ քալ թուաբանութեան առաջնորդելու եւ անոնց այս գիտութեան վրայ գաղափար մը տալու: Դասերու յաջորդութիւնն ինչպէս արդէն յառաջաբանին մէջ նշանակուած է, լաւ կ'ատիճանաւորուի եւ թուաբանական կանոններն իրաւամբ զանց առնուած են՝ որոնք կարեւորութիւն անգամ չունին յաճախ նոր սկսող փոքրիկներու համար: Ընդհակառակն տղջ ու շագրութիւնը հրաւիրելու համար պէտք է գիրք մը, մանաւանդ թուաբանութեան դասընթացք մը՝ պատկերներով զարգարել, զոր հեղինակը զանց չէ առած պէտք եղածին պէս գործադրելու համար իւր մեթոդը:

Մէկ խօսքով այն դասագիրքը՝ շատ յարմար է պոլիկներուն՝ որոնք երբ զայն աւարտեն՝ չորս գործողութեանց լրիւ տեղեակ կ'ըլլան արդէն:

ՄԿՐՏԻՃ ԱՐԷԼԵՄԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա Պ Ր Ի Լ

ԿԵՆՍՏԱՆԴՆԱՅԻՆ — Սարգիս Արքեպ. Սարաֆեան եւ իւր ժամանակը 1720-1775. 97: — «Ազգային թատրոն Պոլսի մէջ», 103:

ԱՆԵՍՆԱՐԱՅԻՆԱՅԻՆ — Արքեպի մատենադարձ հայաստանի մասին. 106:

ՄԱՏԵՆԱՐԱՅԻՆԱՅԻՆ — Միքիթա Գօշի Դատաստանագիրք եւ Հայոց հին քաղաքացիական իրաւունքը. 108: — Ուխտանէս եպիսկոպոս պատմագիր. 112: — Յուցակ ձեռագրաց Թարգմ. 116:

ԼԵՃՈՒՆԱՐԱՅԻՆԱՅԻՆ — Հայերէն ստուգաբանութիւններ. 120:

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ — Սամուել վարդապետի ազգայնոց ապագան. 124:

ԳԵՂԱՐՈՒՆԱՅԻՆԱՅԻՆ — Collection Kelekian. 128:

Մ Ա Յ Ի Ս

ԼԷՈՒ ԳՐԱԿԱՆ ՅՈՐԵԼԵԱՆՔ. 129:

ԻՐԱՆԻԱՐԱՅԻՆԱՅԻՆ — Սահմանք եւ կանոնք. 133:

ՄԱՏԵՆԱՐԱՅԻՆԱՅԻՆ — Դարեօ վարդապետ Զորայրեօ. 139:

ՊԱՏՄԱՅԻՆ — Առաջին Ուրարտացիք եւ Արամ. 147:

ԼԵՃՈՒՆԱՐԱՅԻՆԱՅԻՆ — Ստուգաբանական հետազոտութիւնք. 151:

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ — Նամակ Նորայրի. 155:

ՄԱՏԵՆԱՐԱՅԻՆԱՅԻՆ — Mosaique orientale. 156: — Պատմ. Հայոց գրականութեան. 158: — Աղանեսեցի «Դիւանները. 159: — Նոր դասագիրք թուաբանութեան. 160:

ՀՐԱՏԱՐԱՅԻՆ ԵՒ ՊԱՏՄԱՅԻՆԱՅԻՆ ԽՄԱՐԱԿՈՐ

Հ. ԱՌՓԱՏԵԼ Կ. ՊԱՐՈՆՅ

Վ Ի Ե Ն Ն Ա, Մ Ի Ի Բ Ա Ր Ե Ա Ն Ց Գ Վ Ր Ա Ն